Հէօճճէթիւ դատարանի 'ի ժամանակս քննութեան Միւնլիպ Էֆէնտեայ, առաքեալ 'ի Փոխարքայէն Եգիպտոսի։ Եթէ Հայք սակս կատարեալ բաժանորդ լինելոյ եդեալ են զայսոսիկ, ուրեմն խոստովանին զբաժանորդութիւնն, որ եղեւ հաճութեամբ երկուց կողմանց՝ ٢٨ թուին։

4°.—Զիք բացեալ դրունք յեկեղեցին Բեթղեհէմի արտաքոյ սովորութեան, յայսմ ճշմարիտ են բանք Հայոց, և ոչ եմք գրեալ 'ի Նամակին, այլ թէ կամին սեփհականել Հայք զբաժանորդ դուռն հիւսիսային նոր բանալեօք, և այս վրիպակ Հիւպատոսին է։

5°.—Հայք ասացին թէ Նորասահման իրքս յեկեղեցին Բեթղեհէմի եղեւ յաւուրս Նախկին Դատաւորի, և ոչ այժմեան. արդարեւ այնպէս է, սա եւ Հէօճճէթս վասն Զիթենեաց լերին, և արդել զգործադրութիւն հրովարտակացն Լատինաց և Յունաց, և 'ի Նամակին գրեալ էր, թէ Հայք ապաւինեալ 'ի շնորհս Դատաւորին դտին յաջող ժամանակս, այդ ոչ միայն վասն արդի Դատաւորին է, այլ և վասն առաջնոյն, որ հակառակ հրովարտակին նորանոր իրս սահմանել ետ Հայոց յեկեղեցին Բեթղեհէմի և 'ի լեառըն Զիթենեաց։ Հաֆըզ Բէշիր Էֆէնտի ասէ, ծանեաք զբանս Փոխանորդին Յունաց, զՀրովարտակն ձեր, որով փութացեալ էք 'ի Դատաստան, չյայտնել ձեր փութանակի և ոչ տալ ընթեռնուլ զայն, հաստատէ զբանս Փոխանորդին Հայոց, և 'ի ձեռն միջնորդի ծանուցանելն Դատաւորին, զնոյն յայտ առնէ։ Նոյնպէս և ամբաստանեալ իրքն ոչ են լեալ յաւուրս Համտուլլահ Դատաւորի, այլ նախորդի նորին, և 'ի կողմանէ Հայոց չէ պատահեալ ինչ, և դուք խնդիր մատուցեալ էք չինութեան և նորոգութեան, վասն ո՞յր խոստացայք տալ Դատաւորին 30,000 դահեկան։ Եւ նորասահման իրքն Հայոց յեկեղեցին Բեթղեհէմի և յԱյրին, հակառակ ասէք առաջին բաժանորդութեան, և 'ի նմին ժամանակի լեալ է իրաւունք հաճութեամբ երկուց կողմանց, և 'ի ժամանակէն յայնմանէ զոր ինչ ունէին երկու ազգք, մնացեալ են 'ի վիճակի իւրեանց, և ոչ է լեալ վէճ, և կամ աւելի եւ պակաս իրք, միայն ١٢٥٢ թուի՞ն պատահեցաւ չափազանցութիւնս այս։

Միւնլիպ Էֆէնտի յորո՞ւմ ժամանակի, եւ վասն ո՞յր